ԾԱՆՈՒՑՈՒՄ
ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան, 21.04.2021թ.

Հարգելի՛ քաղաք Երևան, Արաբկիր վարչական շրջանի *Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 12 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 9 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 8 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 7 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 10 շենք* բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, ոչ բնակելի տարածքների և շինությունների սեփականատերեր,

Ղեկավարվելով <<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ, 14-րդ հոդվածներով և <<Համատիրության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետով՝ ներկայացվում է <<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> համատիրության իրազեկման միջոցով որոշման ընդունման համար ընդհանուր ժողովի որոշման նախագիծը՝ համաձայն կից հավելվածի:

Տեղեկացնում եմ, որ որոշման նախագծի վերաբերյալ դեմ քվեարկելու համար անհրաժեշտ է 10 /տասը/ օրացուցային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել <<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> համատիրությանը՝ քաղաք Երևան, **Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 10 շենք** հասցեով: Նշված ժամկետում իրազեկման միջոցով ներկայացված ժողովի որոշմանը գրավոր դեմ չքվեարկած կամ գրավոր դեմ չարտահայտված անշարժ գույքերի սեփականատերերը համարվում են կողմ քվեարկած:

Հարգանքով՝ <<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> Համատիրության կառավարիչ՝

Ա. Չախալյան _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՆԴՈՄԻՆԻՈՒՄ
ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ
ANI TAXAMAC
ANI TAGHAMAS
00228617
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CONDOMINIUM
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЕРЕВАН КОНДОМИНИУМ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ

<<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ թիվ 21042021

ք. Երևան, 21.04.2021թ.

Հեղինակ՝ <<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> համատիրության կառավարիչ՝
Ա. Չախալյան

<<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> համատիրության /այսուհետ՝ Համատիրություն/ ընդհանուր ժողովի նախագահ՝ Ա. Աբովյան, քարտուղար՝ Լ. Անդրեասյան

ՕՐԱԿԱՐԳ՝

1/ Երևան, Արաբկիր վարչական շրջանի Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 12 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 9 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 8 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 7 շենք, Ն. Տիգրանյան փողոց, փակուղի 10 շենք հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքերի /այսուհետ՝ Շենքեր/ 2021թ-ի ապրիլի 1-ից մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի համար պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ամսական ծախսերի և եկամուտների /բյուջեի/ վերաբերյալ **նախահաշվի հաստատում,**

2/ Նախահաշվի հիման վրա Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման 2021թ. **տարեկան բյուջեի հաստատում,**

3/ Պարտադիր նորմերի կատարմանն ուղղված շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր վճարների՝ փայավճարների **չափի, կարգի և ժամկետների սահմանում:**

Ելույթ ունեցավ Համատիրության կառավարիչը, ով ներկայացրեց Համատիրության 2021թ. ապրիլի 1-ից մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի համար Շենքերի պահպանության ամսեկան ծախսերի վերաբերյալ ակտը և դրա հիման վրա կազմված ծախսերի և եկամուտների նախահաշիվը, ինչպես նաև նախահաշվի հիման վրա կազմված տարեկան բյուջեն և առաջարկեց պարտադիր վճարների ամսական չափը սահմանել

1) բնակելի նշանակության տարածքների սեփականատիրոջից՝ սեփականության իրավունքի վկայականում գրանցված անշարժ գույքի մակերեսի 1 քմ-ի համար ամսական՝ 150 ՀՀ դրամ:

2) հասարակական նշանակության տարածքների սեփականատիրոջից՝ սեփականության իրավունքի վկայականում գրանցված անշարժ գույքի մակերեսի 1 քմ-ի համար ամսական՝ 100 ՀՀ դրամ,

3) ավտոկայանատեղի նշանակության անշարժ գույքի սեփականատիրոջից՝ մեկ միավորի համար ամսական 1000 ՀՀ դրամ:

Համատիրության ընդհանուր ժողովը, ղեկավարվելով <<Բազմաբնակարան շենքի կառավարման մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի /ժդ/ և /ժը/ ենթակետերով, 12-րդ կետով, 14-րդ հոդվածով և <<Համատիրության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ կետով, ինչպես նաև Համատիրության կանոնադրությամբ,

ՈՐՈՇԵՑ՝

1. Հաստատել Շենքերի 2021թ-ի ապրիլի 1-ից մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաշրջանի համար պարտադիր նորմերի կատարման համար նախատեսված աշխատանքների ամսական ծախսերի և եկամուտների /բյուջեի/ վերաբերյալ նախահաշիվը:
2. Հաստատել Շենքերի ընդհանուր բաժնային սեփականության կառավարման 2021թ. տարեկան բյուջեն:
3. Պարտադիր նորմերի կատարմանն ուղղված շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր վճարների չափը 2021թ-ի մայիսի 1-ից սահմանել՝

   3.1 բնակելի նշանակության տարածքների սեփականատիրոջից՝ սեփականության իրավունքի վկայականում գրանցված անշարժ գույքի մակերեսի 1 քմ-ի համար ամսական՝ 150 ՀՀ դրամ,

   3.2 հասարակական նշանակության տարածքների սեփականատիրոջից՝ սեփականության իրավունքի վկայականում գրանցված անշարժ գույքի մակերեսի 1 քմ-ի համար ամսական՝ 100 ՀՀ դրամ,

   3.3 ավտոկայանատեղի նշանակության անշարժ գույքի սեփականատիրոջից՝ մեկ միավորի համար ամսական՝ 1000 ՀՀ դրամ:
4. Սահմանել, որ պարտադիր վճարների վճարումը յուրաքանչյուր ամսվա համար պետք է իրականացվի մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10 /տասը/ ներառյալ: Վճարումը պետք է իրականացվի անկանխիկ եղանակով <<ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ>> համատիրության <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ում սպասարկվող թիվ 1570070662670100 հաշվեհամարին գումարը հաշվեգրելու /փոխանցելու, վճարելու/ միջոցով կամ կանխիկ եղանակով Համատիրության դրամարկղ:
5. Սահմանել, որ սույն որոշմամբ սահմանված վճարների չափերը գործում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը և ենթակա է փոփոխման՝ հաջորդ տարվա բյուջեի նախահաշիվը կազմելու և ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելու հետ միասին:

Ժողովի նախագահ՝ Ա. Աբովյան

Ժողովի քարտուղար՝ Լ. Անդրեասյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆ
РЕСПУБЛИКА АРМЕНИЯ ЕРЕВАН ГОРОДСКОЙ СУД
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CITY COURT
ԱՆԻ ԹԱՂԱՄԱՍ
АНИ ТАХАМАС
ANI TAGHAMAS
00228617